

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-1**

ք. Աշտարակ

12 հունիս 2014 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և « ԵՍ ԵՎ ՆԱ » ՍՊԸ ---ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված եղնիկ համայնքի դպրոցի վերանորոգում և ամրացում աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2014թ. Դեկտեմբերի 10-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքներ, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն

վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել սյն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին որ կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախազմանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնարարական ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, *իսկ տարածամկետը վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:*

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատունն սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 66 000 000 վաթսույնվեց միլիոն ՀՀ դրամ, որից 11 000 000 տասնմեկ միլիոն ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն

իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՔԱՂԹԱՔԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ուժ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում ենթակապալառուի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև ադ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտի մարզպետարան
«Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.
Պետրոսյան 4
«Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h 900441000024 ՀՎՀՀ 05004247
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Գևորգյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
«Արագածոտնի մարզ,
ք. Ապարան.Պ.Սևակի 11
Ակրա կրեդիտ Ազրիկուրանկ ՓԲԸ
Արագածոտն Մ/Ճ
ՀՀ 052003930127000





Ս. Կապույան

ՕՍՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Եղիկ համայնքի դպրոցի վերանորոգում և ամրացում ԱՇՆԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Գ/Գ	Հիմնավորում	Աշխատանքի նկարագիր	Չ/մ	ՔԱՆԱԿ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
1, Քանդման աշխատանքներ						
1	46-98	Տանիքի ծածկի քանդում ասբոշիֆերից	100 մ ²	11.00	50.000	550.000
2	10-70. k=0,5	Տանիքի փայտանյութի քանդում	մ ³	2.3	15.000	34.500
3	10-70. k=0.5	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ ³	5.10	15.000	76.500
4	46-96	Ջրհորդանի քանդում մետաղական թիթեղից	100 մ ²	1.700	30.000	51.000
5	23-151	Գոյ. ունեցող միջնորմների քանդում	100 մ ²	0.195	30.000	5.850
6	11-223	Պատերի գաջի սավաղի քանդում	100 մ ²	0.12	30.000	3.600
7	23-151	Գոյ. ունեցող միջնորմների քանդում	100 մ ²	0.36	30.000	10.800
8	23-163	Տախտակե հատակ. քանդում	100 մ ²	3.059	70.000	214.130
9	23-160	Բետոնե աստիճանների քանդում	մ ³	0.2	10.000	2.000
10	11-223	Պատերի գաջի սավաղի քանդում	100 մ ²	3.08	30.000	92.400
11	5-2-4	Լինոլիումե հատակների քանդում	մ ²	82.4	0.300	24.720
12	14-320	Պատի մաքրում հին ներկից /յուղաներկ և սոսնձաներկ/	100 մ ²	15.20	30.000	456.000
13	11-94	Առաստաղի գաջի սավաղի քանդում	100 մ ²	1.02	30.000	30.600
14	23-174	Դռների քանդում	100 մ ²	0.5474	100.000	54.740
15	23-166	Կերամիկական սալիկ.հատակ.քանդում	100 մ ²	0.220	50.000	11.000
16	23-172	Պատուհանների քանդում	100 մ ²	1.4805	100.000	148.050
17	23-169	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100 մ ²	3.623	50.000	181.150
18	23-160	Բետոնե նախաշերտի քանդում	մ ³	1.3	10.000	13.000
19	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	11.7	5.000	58.500
20	Գ310-5	Տեղափոխում 5կմ	տն	11.7	2.000	23.400
21	23-227	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	15.0	5.000	75.000
22	Գ310-3	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	15.0	2.000	30.000
23	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	19.2	5.000	96.000
24	Գ310-3	Տեղափոխում 3կմ	տն	19.2	2.000	38.400
25	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	22.0	5.000	110.000
26	Գ310-3	Տեղափոխում 3կմ	տն	22.0	2.000	44.000
27	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	4.0	5.000	20.000
28	Գ310-3	Տեղափոխում 3կմ	տն	4.0	2.000	8.000
2,Տանիք						
1	12-288-1	Ջերմամեկուսիչ շերտի վերականգնում	մ ³	11.1	8.000	88.800
2	10-70.	Ծաղեղնաուղի տեղադրում (մասնավորապես մատերևատ,թեքան)	մ ³	8.00		8.000


3	10-70.	Ծափեղնատքի տեղադրում /առանց փայտի արժեքի/	մ ³	0.42	30.000	12.600
4	9-24,	Տանիքի պրոֆիլավոր ցինկապատ մետաղաթիթեղ ԿՊ -21-- 0,5 մմ	100 մ ²	11.08	400.000	4432.000
5	Շուկա	Կավարամածի կառուցում 50*60	մ ³	4.65	120.000	558.000
6	12-278 8-3	Ջրհորդանի կառուցում ցինկապատ թիթեղից	100մ	2.511	700.000	1757.000
7	Շուկա	Տախտակ ջրհորդանի 50 մմ հաստ	մ ³	6.40	120.000	768.000
8	Շուկա	Ջրբափ խողովակ 140 մմ	մ	80.5	1.000	80.500
9	8-195	Չափար	հատ	23.0	1.000	23.000
10	Շուկա	Ծունկեր	հատ	23.0	0.500	11.500
11	10-71 k=0,5	Չեղնալուսամուտի վերանորոգում /աստիճանների կառուցումով/	հատ	5.0	10.000	50.000
12	12-280	Չափաքանազօի կառուցում ց/թիթեղից 0,55 մմ	100մ ²	0.484	400.000	193.600
13	10-201 37-1	Փայտանյութի մշակում հակամեխիչ և հակահրդեհային լուծույթով/կեղևից մաքրումով/	մ ³	35.0	10.000	350.000
14	10-203 37-3	Կավարամածի հակահրդեհային լաքապատում	100 մ ²	11.08	50.000	554.000
15	10-22	Ճակտոնի կառուցում տախտակից - 25 մմ	մ ²	8.0	5.000	40.000
16	12-280	Ճակտոնի երեսապատում ցինկապատ թիթեղով - 0,5 մմ	100մ ²	0.08	400.000	32.000
17	12-280	Ճակտապին հատվածի փակում ցինկապատ թիթեղով - 0,55 մմ	100մ ²	0.503	400.000	201.200
18	12-280	Հոսանոցի կառուցում ցինկապատ թիթեղով - 0,55 մմ	100մ ²	0.284	400.000	113.600
19	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում А500С	տն	0.1367	400.000	54.680
20	23-47	Անցքերի զայլիկոնում 370 մմ խորությամբ	100անց	2.28	50.000	114.000
21	46-71	Անցքերի ցեմենտացում	մ ³	0.02	0.000	0.000
22	8-9,	Որմնափայտի և ծափեղնաքերի ամրակապում տեղադրվող խարիսխներից	կգ	50.6	0.400	20.240
23	Շուկա	Ամրան /ճարմանդ/	տն	0.023	400.000	9.200
3. Հիմքերի հիդրոմեկուսացում						
1	1-1551.	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000մ ³	0.0707	800.000	56.560
2	1-961	Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի	մ ³	8.0	5.000	40.000
3	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	8.0	2.000	16.000
4	1-1635	Բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ ³	0.0707	400.000	28.280
5	15-298	Պատերի /հիմքերի/ սվաղում ց/ավազ շաղախով ամրամային ցանցի վրա 50*50*1.8/ռաքիցա/	100մ ²	1.08	300.000	324.000
6	8-15	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում իզոզամի 1 շերտ ,մակերևույթի հարթեցումով ց/ավազ շաղախով	100մ ²	1.08	250.000	270.000
4. Հատակներ						
1	11-5.	Ավազակոպճային հիմնատակ հատակների	մ ³	185.00	5.500	1017.500
2	11-2.	Բնահողի տոփանում խճով /10-15մմ/	100մ ²	4.049	50.000	202.450
3	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ ²	7.160	150.000	1074.000
4	11-11.	բետոնե նախաշերտի կառուցում 80մմ	մ ³	32.4	40.000	1296.000
5	11-71. 11 73.	Խճանկարային հատակների կառուցում 40 մմ հաստությամբ	մ ²		0.000	0.000
6	11-135	Հատակների կառուցում սալիկներից /Պրեսգրամիտ սալ /400*400/սոսինճ-4 մմ	100 մ ²	2.568	800.000	2054.400
7	11-135	Կերամիկական սալիկներից հատակների կառուցում սոսինճ-4 մմ 330*330	100 մ ²	0.22	600.000	132.000
8	11-191	Լամինատե հատակների կառուցում-8 մմ հաստ /սպունգով և շրիշակներով/ավորակ	մ ²	437.1	7.000	3059.700
9	11-135	Պրեսգրամիտ շրիշակների կառուցում H=10սմ	100մ ²	0.22	800.000	188.800




10	11-191	Լամինատե երեսապատում բեմահարթակի	մ ²	3.4	7.000	23.800
5.Բացվածքներ						
1	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ (օտար պրոֆիլ, սպիտակ) 60 մմ հաստ, 4+4 ապակեփաթեթ	մ ²	39.69	25.000	992.250
2	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /չբացվող/ (օտար պրոֆիլ, սպիտակ) 60 մմ հաստ, 4+4 ապակեփաթեթ	մ ²	103.04	25.000	2576.000
3	Շուկա	Մետաղապլաստե դռան տեղադրում 6 սմ (օտար պրոֆիլ, սպիտակ գույն)	մ ²	47.95	40.000	1918.000
4	7-51.	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ ²	38.8	3.000	116.400
5	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /40 սմ լայնութ./	գմ	97.0	4.000	388.000
6	15-210	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափերի տակ ց/ավ. սվաղի իրականացում	100մ	0.983	50.000	49.150
7	Շուկա	Ալյումինե դռան տեղադրում (օտարերկրյա պրոֆիլ 4+4, սպիտակ, թերմոկամրջով) 60 մմ հաստ	մ ²	13.89	60.000	833.400
6.Ֆարդարման աշխատանքներ						
1	15-210	Արտաքին շեպերի սվաղում ց/ա շաղախ մինչև 20 սմ լայնությամբ	100մ	2.725	50.000	136.250
2	15-247-1	Առաստաղի սվաղում գաջի շաղախով	100 մ ²	0.086	300.000	25.800
3	11-64վ	Առաստաղի գաջի սվաղի նորոգում բարելավված որակի մինչև 10 մ քառ	100 մ ²	1.05	350.000	367.500
4	15-277-1	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ ²	2.086	500.000	1043.000
5	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի/ց	100 մ ²	2.545	250.000	636.250
6	15-256	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ ²	0.7150	200.000	143.000
7	15-82	Պատերի երեսապատում կերամիկա-կան սալիկներով 200*300 - սոսինձ-4մմ հաստ	100մ ²	0.7150	500.000	357.500
8	11-57վ	Պատի գաջի սվաղի նորոգում բարելավված որակի մինչև 10 մ քառ	100 մ ²	2.49	230.000	572.700
9	15-568	Շեպերի յուղաներկում	100մ ²	2.086	100.000	208.600
10	15-660	Պատերի ներկում լատեքսով լավորակի/կիսափայլում/	100 մ ²	14.526	200.000	2905.200
11	15-661	Առաստաղների ներկում լատեքսով լավորակի/կիսափայլում/	100 մ ²	6.965	200.000	1393.000
12	9-101	Կախովի առաստաղի իրականացում պլաստ մասե /սպիտակ/ կարկասի վրա	մ ²	22.0	8.000	176.000
13	ինֆ տեղ	Պլաստմասե անկյունակների տեղադրում	100գծմ	0.180	10.000	1.800
14	20-404	Դեկորատիվ ցանցի տեղադրում 200*200	հատ	27.0	0.500	13.500
7.Միջնորմներ և պատեր						
1	1-937	3 - ող կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	9.1	5.000	45.500
2	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	2.1	3.000	6.300
